

տեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ եւ ոչ ծաղկաբոյս¹ գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտաբոյսք եւ պարարտ արաւոք պարարտահամք²։ որոց թանձրախիտ աճմունք խոտոցն զանթիւ արաւտականս ընդանի³ իշանց⁴ եւ զանհամբոյր բոյլս վայրենի երեոցն յագեցուցեալ⁵ թանձրաթաղանթս, առուգազաւակս⁶, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն։ 4 Իսկ սաստկաբուրումն⁷ անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասեր նետողացն եւ զհաւտարած⁸ բացաւթեզացն⁹, ընծեռելով առողջութիւն՝ զաւրացուցանեն զզգայութիւն¹⁰ խելացն եւ նորոգեն։ 5 Անդ գտանին եւ ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս աւգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յաւրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, եւ կամ արքմամբ¹¹ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն։

6 Իսկ դաշտացն¹² ամենալրութիւն զկամս աշխատասիրացն կորզելով յինքեանց¹³ իբրեւ բանիւ, եւ առլցեալ որ զինչ եւ է բարով՝ եւս առաւել փութանակի զդարձն առ ինքեանս հրաւիրեն միանգամայն։ 7 Որք ոչ միայն երեւելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւն աւգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն՝ զառ ընդ երկրաւ ծածկեալ աւգուտս ուսուցանեն, գանձել անձանց շահս¹⁴ եւ զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց եւ ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի եւ զպղինձ եւ զերկաթ եւ զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ¹⁵ զարդեալքն յաւրինուածովքն, զոր ի խոյրսն եւ ի թագսն եւ ի հանդերձսն յոսկեհուռս¹⁶ պաճուճեալս ընդելուզանեն։ 8 Այլ եւ ածմամբ ջրոց՝ համածին անուշութիւնս մատուցանեն կերողացն¹⁷ զխորտկացն որոշութիւնս։ 9 Նաեւ զարմատս եղեգնասեր¹ բու-

1 Ձ. ծաղկաբոյսս

2 ՏՏ. պարարտաբոյսք

3 Գտ. ընդունի

4 Ձ. արօտական ընդան իշխանց

5 Ձ. յայգեցուցեալ

6 Ձ. առուգաւակս

7 Ձ. զսաստկաբուրումն

8 Ձ. զհօտարած է

9 ԲԳտ. բացօթեզացն

10 Ձ. զսգայութիւն

11 Ձ. սրբմամբ

12 Ձ. զդաշտացն

13 Ձ. յինքեանցս

14 ՏՏ. զշահս

15 Ձ. մեծատեսիլս

16 ՏՏ. ոսկեհուռս

17 ՏՏ. չիք կերողացն